

Հարցում

Հարգելի Արտակ Պողոսյան,

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցում նախաձեռնած «Գնդակահարությա պատ» նախաձեռնությանն արձագանքելով՝ Karine Zhamakochyan անուն-ազգանունով հանդես եկող օգտատերը գրել է, որ մասնակցել է կամավոր ատեստավորմանը, պատասխանել միայն 13 առաջադրանքի, հաջորդ առաջադրանքները չի տեսել, քանի որ էկրանի վրա նշում չի եղել, որ կան այլ հարցեր ևս: ՀՀ վարչապետին ուղղված հարցադրումից ակնհայտ է, որ ուսուցիչն անհրաժեշտ միավորները չի հավաքել տեխնիկական խտտանի պատճառով: Այս առնչությամբ խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին.

1. ԿՏԱԿ-ը՝ ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն՝ կամավոր ատեստավորումն անցկացնելով էլեկտրոնային թեստավորման եղանակով և համակարգելով այն՝ ուսուցիչներին տեղեկացրե՞լ է, թե գրավոր թեստավորման հարցերը քանիսն են: Եթե այո, խնդրում եմ պատասխան գրությամբ ուղարկել հղումը:

2. Առաջին անգամ էլեկտրոնային տարբերակով անցկացված ատեստավորման արդյունքում չպատասխանած առաջադրանքներով քանի՞ աշխատանք է եղել, և պարզաբանվե՞լ է արդյոք պատճառը:

3. Թեստի՝ «ավարտել» հրահանգին կից եղե՞լ է չկատարված առաջադրանքների մասին ծանուցող գործառույթ, որը հնարավորություն կտար խուսափել ուսուցչի վկայակոչած թուրիմացությունից:

ՀՀ Սահմանադրության և «Տեղեկատվության ազատության» մասին ՀՀ օրենքի պահանջներով խնդրում եմ այս գրությամբ ձևակերպված բոլոր (3) հարցերին

պատասխանել ամբողջությամբ՝ համապատասխանաբար 3 կետով և հնարավորինս
հստակ:

Հարգանքով՝ www.mediaforedu.am կայքի խմբագիր՝

Անուշ Մարտիրոսյան



23.12. 2024 թ.